Քոլեջի տնօրեն՝ Լ. Մեհրաբյան

Հաստատված է
Քոլեջի հիմնադիրների խորհրդի
31.03.2015թ. նիստում
(Արձանագրություն թիվ 31)

«ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՍՊԸ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ բժշկական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) մանկավարժական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) խորհրդակցական մարմին է, որի նպատակն է կազմակերպել Քոլեջի կրթական գործունեությունը՝ միաժամանակ բարձրացնելով ուսանողների կրթության և դաստիարակության որակը:

1.2 Խորհրդի կազմը, ՀՀ օրենսդրությանն ու Քոլեջի կանոնադրությանը համապատասխան և սույն կանոնակարգով ձևավորվում է հետևյալ տոկոսային համամասնությամբ:

- Քոլեջի ղեկավար կազմը ամբողջությամբ -100%,
- Քոլեջի դասախոսական կազմը ամբողջությամբ--100%,
- Քոլեջի ուսանողությունը՝ Խորհրդի ընդհանուր կազմի -25%-ը,
- Գործատուներ և հրավիրվածներ հրավիրվածության շրջանակներում:

1.3 Սույն կանոնակարգը հաստատվում է Քոլեջի հիմնադիրների խորհրդի կողմից և վավերացվում Քոլեջի տնօրենի կողմից:

1.4 Քոլեջի հիմադիրների խորհրդի հաստատումից հետո սույն կանոնակարգը մտնում է ուժի մեջ:

1.5 Խորհրդի աշխատանքները ղեկավարում է Քոլեջի տնօրենը, որն ի պաշտոնե Խորհրդի նախագահն է:

1.6 Խորհրդի անդամներից նշանակվում է մշտական քարտուղար, որը պատասխանատու է Խորհրդի նիստերի արձանագրման համար:

2. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Խորհուրդը քննարկում է.

– Քոլեջի զարգացման ծրագրերը և հեռանկարները, որոնք ներկայացվում են հիմնադիրների խորհրդի հաստատմանը,

- ուսանողների ուսումնառության որակի և նրանց հետ տարվող դաստիարակչական աշխատանքների կազմակերպման հարցեր,
- Քոլեջի ուսանողական խորհրդի ներկայացրած հաշվետվությունները, ինչպես նաև ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

2.2 Խորհուրդը որոշումներ է ընդունում.

- Քոլեջի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին,
- ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու մասին,
- օրենսդրությամբ, Քոլեջի ներքին կարգապահական կանոններով և կանոնադրությամբ սահմանված կարգով Քոլեջի աշխատակիցների և ուսանողների նկատմամբ խրախուսանք կամ կարգապահական տույժ կիրառելու մասին:

3. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Խորհրդի նիստերը գումարվում են խիստ կանոնակարգված և պարտադիր տարեկան չորս անգամ հետևյալ ժամանակացույցով (Հրաման 02/15, 02.01.2015թ.)

առաջին նիստ – 02.02 ÷ 06.02,

երկրորդ նիստ- 02.07 ÷ 06.07,

երրորդ նիստ- 24.08÷27.08,

չորրորդ նիստ- 24.12 ÷ 27.12,

անհրաժեշտության դեպքում գումարվում են նաև արտահերթ նիստեր՝

-տնօրենի նախաձեռնությամբ,

- մանկավարժական խորհրդի անդամների 1/3–ի նախաձեռնությամբ,

- հիմնադիրների խորհրդի նախաձեռնությամբ:

3.2 Խորհրդակցական ձայնի իրավունքով Խորհրդի նիստերին կարող են մասնակցել գործատուներ, շրջանավարտներ, ծնողներ և այլ անձինք:

3.3 Քոլեջի ուսումնական մասը, Խորհրդի նիստերից առնվազն մեկ շաբաթ առաջ, Խորհրդի մասնակիցներին պատշաճ կերպով տեղեկացնում է նիստերի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին:

3.4 Խորհրդի նիստի որոշմամբ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

3.5 Խորհրդի նիստերն իրավազոր են, եթե դրանց մասնակցում են Խորհրդի անդամների թվի կեսից ավելին:

3.6 Խորհրդի որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, ընդ որում Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

3.7 Խորհրդի անդամների ձայների հավասար բաշխվելու դեպքում, ընդունվում է տնօրենի առաջարկը:

3.8 Խորհրդի քարտուղարը պատասխանատու է Խորհրդի արձանագրությունների բարեխիղճ կազմման համար, նիստի արձանագրությունը կազմվում է չորս աշխատանքային օրվա ընթացում և ստորագրվում ու կնքվում է Խորհրդի նախագահի կողմից: